Քաղաքի ծայրում մեր դէմ եկաւ մի անորոշ աղմուկ, որ զգալի կերպով մեծանում ու շեշտւում էր: Թմբուկի միօրինակ զարկերը դուրս էին խուժում մի փոքրիկ փայտաշէն տնակից եւ գրաւում բազմաթիւ անցորդներ, որոնք բերանաբաց կանգ էին առել պատերին նկարած տարօրինակ պատկերների առաջ: Իսկ մի ծերուկ նստած դրան մօտ, մի բարձր տեղ հրաւիրում էր ներս:

Մինչդեռ թմբուկը խուլ որոտում էր անընդհատ, մենք դուրս նետուեցինք ժխորից: Եւ երբ քաղաքը ետ մնաց իր յատուկ հոտովն ու նեղ փողոցներովը, ու մեզ մէջ առին դալար սարերը, ակամայ թեթեւացման մի խոր հառաչ դուրս թռաւ մեր կրծքից:

Գնում էինք ձորի գեղեցիկ լանջով, որի վրա մեր ուղին նկատելի կերպով վեր էր սողում:

Ամեն կողմ, ուր նայում ես, թարմ ու կանաչ, որ աչք է շոյում:

Ճամփի երկու կողմը մեզնից վերեւ ու ներքեւ փռւած էին բրնձի արտեր, որոնք անվերջ հարթակներով սանդուխի աստիճանների պէս իջնում էին վար: Ջուրը առատօրէն ոռոգում էր ու ողողում նրանց եւ աղմկոտ առւակներով հոսում էր ձորը ու մի գետակ կազմում:

Ամբողջ սարի լանջը բաժանւած էր փոքրիկ քառակուսիների, որոնց մէջ ամեն տեղ եռում էր աշխատանքը:

Կանաչի մէջ սպիտակին էին տալիս գեղջկուհիների գլխի թաշկինակները եւ գիւղացիների յարդէ սընկաձեւ գլխարկները: Նրանք՝ մարդ ու կին՝ մէջքը երկտակ ծալած ու մինչեւ ծունկները մածուծիկ ցեխի մէջ կանգնած ձեռքով շուռ էին տալիս հողը ու փափկացնում, որ բրինձը լաւ աճի, արդէն